

Հաշվետու գործակալությունը՝ Երկիրը՝	Միացյալ Ազգերի Կազմակերպության Զարգացման Ծրագրի Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի մասով Հայաստան ԱՌԱՋՆԹՍՅԻ ՍՏԱՆԴԱՐՏ ԶԵԿՈՒՅՑ
Համարը և անվանումը՝	Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի զարգացում ՄԱԶԾ/ԳԷՖ/00057439/00060500
Հաշվետու ժամանակաշրջանը՝	հունվար – դեկտեմբեր 2011թ.

I. ՆՊՏՍԱԿԸ

Ծրագրի նպատակն է պահպանել գլոբալ նշանակություն ունեցող Հայաստանի կենսաբազմազանությունը: Ծրագրի խնդիրն է նպաստել արգելավայրերի ընդլայնմանը՝ ապահովելու ներկայիս պահպանվող տարածքների համակարգի ներքո էկոհամակարգերի առավել ընդգրկուն ներկայացվածությունը և առավել ակտիվ մոտեցում ցուցաբերելու կենսաբազմազանության պահպանության գործում: Ծրագրի երկու հիմնական շեշտադրումներն են. (1) ռացիոնալացնել պահպանվող տարածքների համակարգը՝ արգելավայրերի կայացմանն ու գործարկմանը վերաբերող իրավական կարգավորման և ինստիտուցիոնալ համակարգերը բարելավելու միջոցով և (2) զարգացնել ինստիտուցիոնալ կարողությունները՝ փորձարկելով հատուկ պահպանվող տարածքների կառավարման ներկայումս Հայաստանում գրեթե գոյություն չունեցող գործիքները:

Ծրագրի հիմնական արդյունքներն են՝

1. Արգելավայրերի ստեղծման, կառավարման և բիզնես պլանավորման ազգային գործառնական ուղեցույցներն ու նորմերը: Ուղեցույցները հստակ կսահմանեն (i) տարբեր նպատակներով արգելավայրերի օգտագործումը, (ii) արգելավայրերի կանոնադրությունների բովանդակությունը, նպատակը և մշակման գործընթացը, (iii) արգելավայրերի ֆինանսավորումը, (iv) արգելավայրերում կառավարման միավորների ստեղծումը, արգելավայրերի կառավարմանը համայնքների մասնակցությունը, (v) կառավարման մոդելը, բիզնես պլանը և դրանց մշակման ուղեցույցները, (vi) կենսաբազմազանության պահպանության մոդելները:

2. Կմշակվի արգելավայրերի կառավարման գործում տարբեր հաստատությունների ինստիտուցիոնալ պարտականությունները և պատասխանատվությունները ամրագրող ենթաօրենսդրական ակտ:

3. Կստեծվեն երեք նոր արգելավայրեր՝ «Գնիշիկ»՝ Վայոց Ձորի մարզում, «Խուստուփ» և «Զանգեզուր»՝ Սյունիքի մարզում, մոտ 48,000 հեկտար ընդհանուր մակերեսով:

4. Կմշակվի հայեցակարգ երկու կոնկրետ մոդելների վերաբերյալ (զուտ համայնքային կառավարում և համատեղ կառավարում), որոնք կփորձարկվեն երեք համապատասխան արգելավայրերում:

5. Ազգային ուսումնական դասընթացներ, շեշտադրելով IUCN-ի IV կատեգորիայի արգելավայրերը: Տեղական մակարդակով ծրագիրը կնպաստի ցուցադրական արգելավայրերում տեղեկատվական և կրթական երեք կենտրոնների ստեղծմանը:

6. Կմշակվեն և յուրաքանչյուր փորձական արգելավայրում կիրականացվեն համակցված կառավարման և բիզնես պլաններ, որոնք հիմնված կլինեն միջազգային փորձի վրա և կհանդիսանան փոքր բիզնեսի համար իրապաշտական ուղեցույց: Պլանները կօգտագործվեն որպես ռեսուրսների կայուն օգտագործման, ինչպես նաև տուրիզմի, կայուն արածեցման, կարգավորված սիրողական որսորդության և վաճառման ենթակա բույսերի հավաքման հիմք:

7. Կառավարման և եկամտաբեր գործունեության մեկնարկ՝ (i) տեղական համայնքների անդամների աջակցությամբ և մասնակցությամբ որսագողության դեմ պայքարելու գործիքներ. (ii) էկոհամակարգերի մոնիթորինգի ծրագրերի իրականացում. (iii) կենդանիների արածեցման համակողմանի ծրագրի իրականացում. (iv) տուրիզմի կայուն զարգացում:

8. Կենսաբազմազանության արդյունավետ պահպանության ոլորտում արգելավայրերի ձախողումը

հաղթահարող կրիտիկական զանգվածի ցուցադրում:

Սույն Ծրագրի ջանքերը կգործադրվեն հատուկ պահպանվող տարածքների ազգային համակարգը ավելի լավ զինելու համար, ինչը հնարավորություն կտա ներառել և պահպանել ներկայումս թերի ներկայացված էկոհամակարգերը և դրանց կապակցված տեսակները: Համայնքային տարածքներում ծրագիրը ներդրում կունենա լանդշաֆտների արդյունավետ կառավարման ապահովման գործընթացին, նպաստելով չքավորության նվազեցմանը: Ծրագիրը կհզորացնի Հայաստանի պահպանվող տարածքների համակարգի ֆինանսական կայունությունը:

Ծրագիրը ներդրում է ունենում ՄԱԿԶԱՄ (UNDAF) ձեռքբերում 4-ին և ՀՕ (CP) ձեռքբերում 7-ին, ՀՕԳՊ (CPAP) արդյունք 7.4-ին:

Ծրագիրը կատարող կազմակերպություններն են հանդիսանում ՀՀ բնապահպանության նախարարությունը (ՀՀ ԲՆ) և նրա «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (ԲԾԻԳ ՊՀ, նախկին «Բնապահպանական ծրագրերի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն /ԲԾԿ ՊՈԱԿ/): Ծրագիրը կատարող հասարակական կազմակերպությունն է (ՀԿ) Բնության Համաշխարհային Հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը (WWF-Հայաստան):

II. ՌԵՍՈՒՐՍԵՐԸ

Ծրագիրը ամբողջությամբ ֆինանսավորվում է Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից և բյուջեն կազմում է 950,000 ԱՄՆ դոլար: Ծրագրի ընդհանուր բյուջեն, ներառյալ համաֆինանսավորումն ու ԳԷՀ-ի միջոցները, կազմում է 2,950,000 ԱՄՆ դոլար: Համաֆինանսավորումը կազմում է 2,000,000 ԱՄՆ դոլար, ներառյալ ՀՀ ԲՆ կողմից հատկացվող 1,500,000 ԱՄՆ դոլարի համարժեք գումարը և WWF-ի կողմից հատկացվող 500,000 ԱՄՆ դոլարը:

2011 թվականի համար ԳԷՀ-ի կողմից հատկացված գումարը կազմում է 281,848 ԱՄՆ դոլար, որից 154,848 ԱՄՆ դոլար հատկացվում է ԲԾԻԳ ՊՀ 00057439 ենթաձևագրին (պահպանվող տարածքների համակարգի ռացիոնալացում) և 127,000 ԱՄՆ դոլար՝ ՀԿ 00060500 ենթաձևագրին (պահպանվող տարածքների ինստիտուցիոնալ կարողությունների զորացում):

III. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները՝ հետևյալ արդյունքների ձեռքբերմամբ.

1. Ծրագրի պլանավորումը: Ծրագիրը պլանավորվել է 2011թ հաստատված գործողությունների տարեկան պլանի համապատասխան:

2. Բաղադրիչ 1. ԲՀՊՏ համակարգի ռացիոնալացում:

ԲԾԻԳ ՊՀ-ի կողմից իրականացվել են աշխատանքներ հետևյալ արդյունքների ձեռքբերմամբ.

- “ՀՀ բնապահպանության նախարարի՝ 2010թ. թիվ 340-Ա հրամանով ստեղծված ՀՀ պահպանվող տարածքների օրենսդրության վերանայման միջգերատեսչական աշխատանքային խումբը՝ կազմված ՀՀ բնապահպանության, արդարադատության, տարածքային կառավարման և գյուղատնտեսության նախարարությունների, ինչպես նաև WWF-Հայաստանի ներկայացուցիչներից, համաձայնության է եկել ՀՀ ԲՀՊՏ մասին ՀՀ օրենքի նախագծի 25 հոդվածների վերաբերյալ: Քննարկումները դեռ ընթացքի մեջ են:
- “Արգելավայրերի վերաբերյալ համայնքների իրազեկվածության ուսումնասիրություն” տեխնիկական զեկույցը բացահայտել է տեղի բնակիչների կախվածությունը և վերաբերմունքը արգելավայրերի նկատմամբ: Կարևոր նկատառումն այն է, որ գործող արգելավայրերին կից համայնքների բնակիչները կարծում են, որ արգելավայրերի առկայությունը տեսանելի ազդեցություն չունի իրենց սոցիալ-տնտեսական դրության բարելավման վրա, իսկ նախատեսվող արգելավայրերին կից համայնքների բնակիչները, հակառակը, հավատում են, որ արգելավայրերի ստեղծումը տեսանելի ազդեցություն կունենա համայնքի սոցիալ-տնտեսական դրության բարելավման վրա:
- Գնիշիկի, Խուստուփի և Զանգեզուրի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ առկա տվյալների մասին

տեխնիկական զեկույցը, արդեն իսկ գրանցված տեսակների և դրանց տարածվածության ցանկերի հետ միասին վերլուծում է Ծրագրի տարածքների կենսաբազմազանության վիճակը: Անհրաժեշտ են լրացուցիչ դաշտային աշխատանքներ՝ ավարտին հասցնելու դրանց ներկա տարածվածության վերաբերյալ տվյալների ամփոփումը: Զեկույցը հիմք է հանդիսանում պահպանվող տարածքների սահմանագծման և կառավարման պլանների մշակման համար:

- “Պետական արգելավայրերի կառավարման ինստիտուցիոնալ կապերի ձևավորում” տեխնիկական զեկույցը վերլուծում է տարբեր պետական արգելավայրերի ներկայիս կառավարման կարգավիճակը, տարբեր կառավարման լիազորություններ ունեցող գործակալությունների միջև փոխհարաբերությունները և փաստում շահառուների միջև ինստիտուցիոնալ կապերի կարևորությունը՝ արգելավայրերի արդյունավետ կառավարման ապահովման գործում:

Քարտեզագրական աշխատանքներ են իրականացվել WWF Հայաստանի կողմից, որի արդյունքում կազմվել են նախատեսվող “Գնիշիկ”, “Խուստուփ” և գործող “Զանգեզուր” արգելավայրերի թվային քարտեզագրական շերտերը, որոնք տվյալներ կպարունակեն համայնքային և պետական հողերի հստակ/վերանայված սահմանների վերաբերյալ: Ստեղծվել են նաև քարտեզներ համայնքային, պետական, գյուղատնտեսական և հողի այլ տեսակների վերաբերյալ:

Բաղադրիչ 1-ի գլխավոր խոչընդոտն այն է, որ չնայած ԲՀՊՏ մասին ՀՀ օրենքի նախագծի մշակման որոշ առաջընթացին, գոյություն ունեցող տարբերակը չի արտացոլում բոլոր ակնկալիքները, մասնավորապես, ՊՏ-ների համայնքային կառավարման վերաբերյալ մոտեցումները: Ռիսկերը վերացնելու նպատակով ԲՀՊՏ մասին ՀՀ օրենքի նախագծին և այլ իրավական ակտերին զուգահեռ ընթացքի մեջ են համայնքային կառավարման ՊՏ-ների ստեղծման և հետագա պահպանման վերաբերյալ այլընտրանքային տարբերակները:

Արգելավայրերի կառավարման նոր մոդելների վերաբերյալ քաղաքականության փաստաթղթի ժամանակին չհաստատելը կարող է պատճառ հանդիսանալ Բաղադրիչ 2-ի ներքո իրականացվող կառավարման և բիզնես պլանների պատրաստման ուշացումների: Միջոցառումներ են ձեռնարկվում արագացնելու վերը նշված քաղաքականության փաստաթղթի մշակումը:

Մյուս խոչընդոտը ծրագրի տարածքներում կենսաբազմազանության բաշխվածության վերաբերյալ նորացված տվյալների անբավարարությունն է, որը կարող է բացասաբար անդրադառնալ պլանավորված ՊՏ-ների սահմանագծման վրա: 2012թ. իրականացվելիք լրացուցիչ դաշտային աշխատանքները կամփոփեն վտանգված և էնդեմիկ տեսակների ներկա բաշխվածության վերաբերյալ տվյալները և առավել օգտագործվող բուսատեսակների ռեսուրսների գնահատումը:

3. Բաղադրիչ 2. Պահպանվող տարածքների ինստիտուցիոնալ կարողությունների գորացում.

WWF Հայաստանի կողմից իրականացվել են աշխատանքներ՝ հետևյալ արդյունքների ձեռքբերմամբ.

- “Գործող “Զանգեզուր” և նախատեսվող “Գնիշիկ” և “Խուստուփ” պահպանվող տարածքներին հարակից համայնքների սոցիալ-տնտեսական ուսումնասիրություն” տեխնիկական զեկույցի վերաբերյալ **SWOT** (ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների, վտանգների) վերլուծությունը բացահայտում է պահպանվող տարածքներին հարակից համայնքներում **ուժեղ կողմերը** (նոր ԲՀՊՏ-ների ստեղծման և գործողների ընդլայնման վերաբերյալ ՀՀ կառավարության և միջազգային կազմակերպությունների որոշումների առկայությունը և պատրաստակամությունը, ԲՀՊՏ-ների զարգացման մեջ ներգրավված տարբեր կազմակերպությունների հաջող փորձը, որակավորում ունեցող մասնագետների առկայությունը, բարձրարժեք գյուղատնտեսական արտադրանքների արտադրման հաջող փորձը), **թույլ կողմերը** (թույլ գյուղատնտեսական և սոցիալական ենթակառուցվածքները), **հնարավորությունները** (եզակի գեղատեսիլ բնություն և մաքուր օդ, մի շարք պատմական, մշակութային, գիտական և այլ հուշարձանների առկայությունը, հնարավորություն՝ զարգացնելու և առաջարկելու զբոսաշրջային և հանգստի ծառայությունների տարբեր տեսակներ) և **վտանգները** (ԲՀՊՏ-ների վերաբերյալ տեղի բնակչության բացասական վերաբերմունքը, աղքատությունը, ծեղաբնական միտումները, երիտասարդների արտագաղթը, Ադրբեջանին սահմանակից լինելը):
- Մյունիքում, Վայոց Ձորում, ինչպես նաև Երևանում իրականացված “Գործող “Զանգեզուր” և նախատեսվող “Գնիշիկ” և “Խուստուփ” պահպանվող տարածքների շահագրգիռ կողմերի վերլուծություն” տեխնիկական զեկույցը բացահայտել է համայնքային խմբերի, պետական միավորումների, ոչ պետական միավորների և մասնավոր հատվածի գլխավոր դերակատարներին, նրանց նպատակները և մտահոգությունները:
- “Գործող “Զանգեզուր” և նախատեսվող “Խուստուփ” ու “Գնիշիկ” պահպանվող տարածքների

զբոսաշրջության հնարավորությունների գնահատում” տեխնիկական զեկույցը թվարկում է տուրիստների համար համայնքների տարածքների հիմնական գրավչությունները, ինչպես նաև տեղեկություններ է տրամադրում տեղական ինքնակառավարման մարմինների, զբոսաշրջային ծառայությունների (սննդի սպասարկում, գիշերակաց, միջոցառումներ եւ փառատոներ) և ենթակառուցվածքների (ճանապարհներ և տրանսպորտ, ճանապարհային նշաններ, հեռահաղորդակցություն, սոցիալական ենթակառուցվածքներ) մասին: Ընդհանուր առմամբ, ենթակառուցվածքները շատ թույլ են, իսկ զբոսաշրջային ծառայությունների տրամադրումը գրեթե բացակայում է (բացառությամբ Արենիի): Զեկույցում ընդգծվում է Սյունիքում Էկոտուրիզմի զարգացման առաջնային խոչընդոտը. աճող հանքարդյունաբերությունը, թափոնների և պոչամբարների անբավարար կառավարումը, որոնք վնասում են շրջակա միջավայրը և վտանգում Էկոտուրիզմի զարգացումը:

- Ձեռք է բերվել նախատեսվող “Գնիշիկ” պահպանվող տարածքի այցելուների և տեղեկատվական կենտրոնը, կահավորվել և գինվել համակարգչով: “Գնիշիկի” վերաբերյալ ինֆորմացիայի զգալի մասը հասանելի է դառնում օրինակ տեղեկատվական ցուցանակների միջոցով: Մշակվում են Այցելուների կենտրոնի կողմից առաջարկվող որոշակի տեղեկատվական ծառայություններ. ա/ պատմամշակութային հուշարձանների վերաբերյալ, բ/ լանդշաֆտների և բնական պայմանների վերաբերյալ, գ/ ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ: Գործողություններ են ձեռնարկվում արագացնելու ՀՀ մշակույթի նախարարության հետ բանակցությունները՝ Այցելուների կենտրոնի տեղի և կարգավիճակի հաստատման վերաբերյալ:

- Չորս հսկիչ կետեր են տեղադրված նախատեսվող “Գնիշիկ” պահպանվող տարածքում:

ՊՏ-ների ինստիտուցիոնալ կարողությունների զորացման բաղադրիչի ներքո իրականացվող կառավարման և բիզնես պլանների պատրաստման ուշացումների պատճառ կարող են լինել հետևյալ խոչընդոտները. Ծրագրի բոլոր տարածքների կենսաբազմազանության բաշխվածության վերաբերյալ նորացված տվյալների անբավարարությունը, իսկ պլանավորվող համայնքային կառավարմամբ “Գնիշիկ” ՊՏ-ի համար հողի կատեգորիայի անորոշությունը, արգելավայրերի կառավարման նոր մոդելների վերաբերյալ քաղաքականության փաստաթղթի բացակայությունը: Ռիսկերը նվազեցնելու նպատակով համապատասխան միջոցառումներ կիրականացվեն 2012թ. Բաղադրիչ 2-ի ներքո:

ԲԾԻԳ ՊՀ-ի կողմից իրականացվել են ուսումնական աշխատանքներ՝ հետևյալ արդյունքների ձեռքբերմամբ.

- Հիմնվելով ծրագրի պահպանվող տարածքների և հարակից համայնքների մասնակիցների գնահատման արդյունքների վրա՝ մշակվել են մասնակիցների կարիքների համապատասխան 7 թեմատիկ դասընթացների ուսումնական ծրագրերը, ժամանակացույցը և թեմատիկ կառուցվածքը:

Դասընթացներ կկազմակերպվեն հենց որ հաստատվի արգելավայրերի գուտ համայնքային կառավարման և համատեղ կառավարման մոդելների վերաբերյալ քաղաքականության փաստաթուղթը և ստեղծվեն Բաղադրիչ 2-ի ներքո նախատեսված արգելավայրերը:

4. Իրազեկության բարձրացում և համագործակցություն: 2011 թ. ընթացքում իրազեկության բարձրացման և գործընկերության կառուցման վերաբերյալ գործողություններ են իրականացվել Սյունիքի (Քաջարան, Կապան, Մեղրի, Շիկահող) և Վայոց Ձորի (Եղեգնաձոր, Արենի, Գնիշիկ, Ագարակաձոր, Խաչիկ) մարզերում՝ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքների, ՀԿ-ների ներկայացուցիչների, պահպանվող տարածքների անձնակազմերի, այլ շահագրգիռ կողմերի և լրատվամիջոցների մասնակցությամբ: Տեղաբնակներին հուզող քննարկված հիմնական խնդիրներից մեկը պահպանվող տարածքների հիմնման և կառավարման դեպքում տեղական համայնքների համար ավանդական գործունեության և եկամուտների սահմանափակումներն են:

Վայոց Ձորում առաջարկվեց ներդաշնակեցնել նոր ստեղծվող “Գնիշիկ” պահպանվող տարածքի ծրագիրը Վայոց Ձորում իրականացվող սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի հետ:

Սյունիքում կայացած հանդիպումների գլխավոր արդյունքն այն էր, որ չնայած տարածքային և տեղական կառավարման մարմինները հանքարդյունաբերությունը կարևոր են համարում սոցիալ-տնտեսական զարգացման համար, նրանք գիտակցում և աջակցում են ՊՏ-ների ընդլայնումը տարածքում՝ արդեն գոյություն ունեցողների ընդլայնման և նոր ՊՏ-ների ստեղծման միջոցով:

2011թ. նոյեմբերի 10-11-ը և նոյեմբերի 24-25-ը Եղեգնաձորում անց են կացվել դասընթացներ տեղական ինքնակառավարման մարմինների անձնակազմի, ավագանու անդամների և Խաչիկ, Գնիշիկ, Ագարակաձոր և Արենի համայնքների բնակիչների համար: Մասնակցել են նաև Վայոց Ձորի

մարզպետարանի և ՀԿ ներկայացուցիչներ /ընդհանուր առմամբ 50 մասնակից/:

Իրազեկության բարձրացման և համագործակցության գործընթացում գլխավոր խոչընդոտը իրականացնող կազմակերպությունների միջև համագործակցության անբավարարությունն է, հատկապես տեղային աշխատանքներում: Հնարավոր տարաձայնություններից խուսափելու համար, ցանկալի է բոլոր իրազեկության միջոցառումներին իրականացնող կազմակերպությունների և Ծրագրի գրասենյակի ներկայացուցիչների մասնակցությունը: Ինչևէ, միջոցառումների ծրագիրը պետք է համաձայնեցվի գործընկերների միջև և հաստատվի ծրագրի ղեկավարի կողմից:

5. Փորձի փոխանակման այց արտերկիր: Ի պատասխան հայաստանյան խմբի՝ Ավստրիա և Մլովենիա կատարած այցի, Ավստրիայի և Մլովենիայի խումբը, որում ընդգրկված էին Կարինցիայի ֆեդերալ կառավարության, ԲՀՊՏ-ների և բնապահպանական խորհրդատվական կազմակերպությունների ներկայացուցիչները /9 հոգի/, հյուրընկալվեց Հայաստանում 2011թ. մայիսի 23-28-ը: Խմբին ընդունեցին ՀՀ ԲՆ նախարարի առաջին տեղակալը, ՀՀ Սյունիքի և ՀՀ Վայոց Ձորի մարզպետները, Քաջարանի քաղաքապետը:

Խորհրդակցությունների ընթացքում հայ և ավստրիական-սլովենական գործընկերների միջև համագործակցության ամենաիրատեսական բնագավառներ սահմանվել են հետևյալները. Բնապահպանական կրթություն և հասարակության իրազեկվածության բարձրացում, ֆերմերների և աշակերտների կողմից շրջակա միջավայրի և կենսաբազմազանության մոնիտորինգ, փորձի փոխանակման այցեր պահպանվող տարածքների կառավարիչների և հարակից համայնքերի ղեկավարների համար, “Խոր Վիրապ” ջրաճահճի էկոլոգիական արժեքների վերականգնում, խորհրդակցել ՊՏ-ների գուտ համայնքային և մասնակցային կառավարման վերաբերյալ. կայուն զբոսաշրջություն և ենթակառուցվածք ՊՏ-ներում, կայուն արոտավայրեր և խոտհունձ, գինեգործություն, դրումի յուղատու տեսակների աճեցում և դրումի ձեթի արտադրություն, ուտելու և դեղորայքային բույսերի հավաքում և սկզբնական մշակում, Ավստրիայում և Մլովենիայում Քաջարանի քույր քաղաքի որոշում և բանակցությունների նախաձեռնում:

6. Մոնիտորինգ և հաշվետվության ներկայացում: Մոնիտորինգի և հաշվետվության փաստաթղթերը կազմվում են համապատասխան ՄԱԶԾ Ծրագրային մոնիտորինգի և Գնահատման պլանի: 2011թ. առաջին, երկրորդ և երրորդ կիսամյակների առաջընթացի հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են ԳԷՀ և ՀՀ ԲՆ:

IV. ԱՊԱԳԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ

2012թ. նախատեսվում են հետևյալ գործողությունները.

Բաղադրիչ 1 Պահպանվող տարածքների համակարգի ուսցիոնալացում
Արդյունք 1.1 2006 թ.-ի Հայաստանի բնության պահպանվող տարածքների մասին օրենքի կատարումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի մշակում

- “Հատուկ պահպանվող տարածքների մասին” ՀՀ օրենքի նախագծի և այլ իրավական ակտերի մշակման ավարտ և ներկայացում ՀՀ ԲՆ

Արդյունք 1.2 Արգելավայրերի կառավարման դերերի և պարտականությունների հստակեցման նպատակով ինստիտուցիոնալ կապերի ձևափոխում:

- Արգելավայրերի կառավարման դերերը ու պարտականությունները հստակեցնող ինստիտուցիոնալ կապերի վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում համապատասխան կազմակերպություններին

Արդյունք 1.3 Թերներկայացված էկոհամակարգերում երեք նոր արգելավայրերի ստեղծում

- Կենսաբազմազանության գույքագրման ավարտ
- Քարտեզագրական աշխատանքների ավարտ /առաջարկվող տարածքների գոտիավորում և սահմանների առաջարկում/
- Քննարկումներ համայնքների հետ “Գնիշիկ” և “Խուստուփ” արգելավայրերի ստեղծման և “Զանգեզուր” արգելավայրի ընդլայնման վերաբերյալ
- “Խուստուփ” արգելավայրի և “Գնիշիկ” ՊՏ-ի ստեղծման և “Զանգեզուր” արգելավայրի ընդլայնման վերաբերյալ Կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ ԲՆ

Արդյունք 1.4

ՊՏ-ների կառավարման նոր մոդելների վերաբերյալ քաղաքականության փաստաթղթի մշակում/գուտ համայնքային կառավարում և մասնակցային կառավարում/, քննարկումներ շահագրգիռ կողմերի հետ և ներկայացում ՀՀ ԲՆ:

Բաղադրիչ 2. Պահպանվող տարածքների կառավարման ինստիտուցիոնալ կարողությունների զորացում

Արդյունք 2.1. Արգելավայրերի կառավարիչների և տեղական համայնքների համար պետական և տեղական ուսումնական ծրագրեր

- Հանրային իրազեկման սեմինարների իրականացում գործող “Զանգեզուր” և նախատեսվող “Խուստուփ” պետական արգելավայրերին հարակից համայնքներում

Արդյունք 2.2. Երեք արգելավայրերի կառավարման և բիզնես պլանների մշակում

- Գործող “Զանգեզուր” պետական արգելավայրի և նախատեսվող “Խուստուփ” և “Գնիշիկ” ՊՏ-ների կառավարման և բիզնես պլանների մշակում, քննարկումներ շահառուների հետ և ներկայացում ՀՀ ԲՆ

Արդյունք 2.3. Աջակցություն կառավարման և բիզնես պլանների իրականացմանը

- “Գնիշիկ” ԲՀՊՏ-ի մասնաշենքի նախագծում:

Արդյունք 2.4. Քաղված դասերի արձանագրում և այլ վայրերում կիրառելու համար պատրաստում

-

V. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

2011թ. Ծրագրի հաստատված ընդհանուր բյուջեն կազմում է 281,848 ԱՄՆ դոլար: Ծրագրի փաստացի ծախսը 2011թ. դեկտեմբերի 9-ի դրությամբ կազմում է 137,593.50 ԱՄՆ դոլար (48.8%), որից ՄԱԶԾ/ԳԷՀ 00057439 ենթաբազրի ծախսը՝ 94,775.30 ԱՄՆ դոլար (61.2 %), իսկ ՄԱԶԾ/ԳԷՀ 000605000 ենթածրագրինը՝ 42,818.20 ԱՄՆ դոլար (33.7%): Բյուջեի հիմնական վերանայումը ՄԱԶԾ/ԳԷՀ 00057439 ենթածրագրով կատարվում է 2013թ. փոխարեն 2011թ. ավտոմեքենա գնելու և գործողությունների և բյուջետային տողերի միջև վերաբաշխում կատարելու նպատակով: Բյուջեի հիմնական վերանայումը ՄԱԶԾ/ԳԷՀ 00060500 ենթածրագրով կատարվում է տարիների և բյուջետային տողերի միջև վերաբաշխում կատարելու նպատակով:

Մինչև 2011 թ. ավարտը նախատեսվում է ունենալ տրամադրված բյուջեի ընդհանուր ծախսերի 98.5 % արդյունք, որից ՄԱԶԾ/ԳԷՀ 00057439 ենթածրագրի ծախսերը՝ 99.5%, իսկ ՄԱԶԾ/ԳԷՀ 00060500 ենթածրագրինը՝ 94.9%: